

# COVID-19 ի թեստավորում Կալիֆորնիա նահանգում Ինչ պետք է իմանաք



Թեստ հանձնեք և ձեր ընկերների, ընտանիքի անդամների և համայնքի համար եղեք անվնաս:

## Ե՞րբ պետք է թեստ հանձնեք:

Անկախ պատվաստած լինելի չլինելու հանգամանքից, որևէ [ախտանիշի](#) – առկայության դեպքում դուք պետք է անմիջապես COVID-19-ի թեստ հանձնեք COVID-19-ի ախտանշանները կարող են նման լինել սովորական մրսածության (այդ թվում՝ «հոսող քթի»), սեզոնային ավերգիայի կամ գրիպի ախտանիշների: COVID-ի թեստավորումը Կալիֆորնիայում բոլորի համար անվճար է:

- Եթե շփվել եք COVID-19-ով վարակվածի հետ և [լիովին պատվաստված չեք](#), անմիջապես թեստ հանձնեք: Եթե ձեր թեստի պատասխանը բացասական է, ապա վարակվածի հետ շփումից 5-7 օր հետո կրկին թեստ հանձնեք: Բոլոր նրանք ովքեր պատվաստված չեն պետք է թեստ հանձնեն բարձր ռիսկայնություն ունեցող ցանկացած միջոցառումից 1-3 օր առաջ և 3-5 օր հետո:
- Եթե դուք լիովին պատվաստված եք, ապա թեստի դրական պատասխան ունեցող որևէ անձի հետ [սերտ շփում](#) ունենալուց 5-7 օր հետո պետք է թեստ հանձնեք:
- Եթե դուք վերջին 3 ամսում վարակվել եք COVID-19 ով և վարակված մարդու հետ շփումից հետո չունեք որևէ ախտանիշ, ապա թեստ հանձնելու կարիք չկա:
- Ճանապարհորդել ե՞ք: Կարդացեք մեր [ճանապարհորդական տեղեկագիրը](#):
- Կարդացեք մեր [ամբողջական թեստավորման ուղեցույցը](#). (Ձեր դպրոցը կամ ձեր աշխատավայրը կարող են ունենալ թեստավորման իրենց պահանջները:)

## Որտե՞ր կարող եմ թեստ հանձնել:

Դուք կարող եք գրանցվել անվճար թեստավորման համար, գտնել կլինիկա, որտեղ կարող եք թեստը հանձնել, կամ տեղական դեղատնից գնել ինքնուրույն թեստը հանձնելու փաթեթ: [Գտեք թեստավորման կայքն առցանց](#) կամ զանգահարեք (833) 422-4255 կամ 211 հեռախոսահամարներով: Ավելին իմանալու համար՝ այցելեք [covid19.ca.gov](https://covid19.ca.gov) կայք էջը: Իմացեք ավելին [COVID-ի թեստավորման տեսանկյան](#) մասին:

## COVID-19 -ը կարող է նման լինել սովորական մրսածության կամ ավերգիայի:

- Ջերմություն կամ սարսուռ
- Չազ
- Չևոց
- Դժվարացած շնչառություն
- Չոզևածություն
- Սկանների կամ մարմնի ցավ
- Գլխացավ
- Չամի զգացողության կորուստ
- Չոտի զգացողության կորուստ
- Կոկորդի ցավ
- Զթի փակվածություն
- Չոսող քիթ
- Սրտխառնոց
- Փսխում
- Լուծ



Սկանավորեք QR կոդը՝  
ինտերակտիվ հղումներն  
այս թռուցիկի վրա  
տեսնելու համար:



## Արդյո՞ք COVID-ի թեստավորումը Կալիֆորնիայում բոլորի համար անվճար է:

Այո: Պահանաջվող բժշկական թեստերի համար լրացուցիչ ծախսեր չկան: Թեստավորման մատակարարը ուղղակիորեն գանձելու է ձեր ապահովագրությունից: Թեստավորումն անվճար է [Նահանգի թեստավորման վայրերում](#):

## Արդյո՞ք պետք է անհանգստանամ ներգաղթյալի իմ կարգավիճակի համար:

Ոչ, տեստավորող կենտրոնները ներգաղթյալի ձեր կարգավիճակի մասին հարցում չեն կատարում:

## Ինչքա՞ն ժամանակ կտևի բացառություն ստանալը:

Թեստի պատասխանը սովորաբար պատրաստ է լինում 2-3 օրից:

## Ի՞նչ պետք է ես անեմ իմ պատասխանին սպասելիս:

Եթե դուք սերտ շփում եք ունեցել COVID-19-ով հիվանդի հետ, դուք պետք է առանձնանաք մյուսներից՝ հիվանդությունը չտարածելու համար: Եթե դուք պետք է շփվեք այլ անձանց հետ՝ ներառյալ ձեր տնային տնտեսության անդամները, ապա կրեք դիմակ և պահպանեք ֆիզիկական հեռավորություն: Եթե ձեր թեստի պատասխանը լինի դրական, ապա ձեր տարածքային առողջապահության բաժնից կստանաք հետագա համապատասխան ցուցումներ բուժման և ինքնամեկուսացման վերաբերյալ:

## Ինչպիսի՞ աջակցություն է տրամադրում Կալիֆորնիա Նահանգը COVID-ով պայմանավորված մեկուսացման կամ կարանտինի ժամանակ:

Մարդիկ, ովքեր COVID-19-ի պատճառով կամ COVID-19-ով վարակվածի կողքը լինելու պատճառով չեն կարող աշխատել և առողջապահության աշխատողի կողմից ունեն ձևաթուղթ, ապա կարող են [դիմել անաշխատունակության ապահովագրության համար \(DI\)](#) Մարդիկ, ովքեր չեն կարող աշխատել, քանի որ ինամում են COVID-19-ով վարակված հիվանդին կամ կարանտինի մեջ գտնվողին, կարող են [ներկայացնել վճարովի ընտանեկան արձակուրդի դիմում \(PFL\)](#)՝ ֆինանսական կորուստները փոխհատուցելու համար: Նրանք պետք է ունենան ուղեգիր բժշկական աշխատողից:



## COVID-19-ի ձեր թեստ դրական է:

Օգնեք դադարեցնել վարակի տարածումը՝ պատասխանելով ձեր առողջապահության բաժնի աշխատակցի զանգին կամ տեքստային հաղորդագրությանը: Բացի այդ, եթե ձեր հեռախոսում ակտիվացված է CA Notify հավելվածը, անանուն ահազանգեք ենթադրվող վարակվածների մասին: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [canotify.ca.gov](https://canotify.ca.gov) կայք էջը:



Սկանավորեք QR կոդը՝  
ինտերակտիվ հղումներն  
այս թռուցիկի վրա  
տեսնելու համար:

